ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 21-ից 26-ը
Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ռուստամ Բադասյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2023թ. հունիսի 21-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Յուրաքանչյուր տարի անց են կացվում Համաշխարհային մաքսային կազմակերպության (այսուհետ՝ ՀՄԿ) Խորհրդի նստաշրջաններ, որոնց ընթացքում քննարկվում են ՀՄԿ Խորհրդի կողմից հաստատմանն ենթակա ՀՄԿ կոմիտեների, ենթակոմիտեների, հանձնաժողովների տարեկան հաշվետվությունները, այդ թվում՝ մաքսային գործի ոլորտում նոր մշակված կամ փոփոխված գործիքներն ու ստանդարտները:

Մասնակցությունը ՀՄԿ Խորհրդի նիստերին նպատակ ունի ապահովել Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունը մաքսային կարգավորման և միջազգային մաքսային հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև դրանց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի դիրքորոշման ներկայացումը:

5. Քննարկված թեմաները՝

Նշված նստաշրջանների ընթացքում քննարկվել են հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կարողությունների զարգացման, այդ թվում՝ առցանց ուսուցման, բարեվարքության, գենդերային հավասարության և այլ ոլորտներում ՀՄԿ կատարած աշխատանքները, ապրանքների դասակարգման,

մաքսային արժեքի և ապրանքների ծագման ոլորտներում մշակված նոր գործիքները և ստանդարտները, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի, տվյալների ռազմավարության, Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրի դյուրինացման համաձայնագրի, ապրանքների բացթողման ժամանակահատվածի, հետբացթողումային հսկողության ոլորտի, ապօրինի առևտրաշրջանառության կանխման ուղղությամբ, ռիսկերի կառավարման կոմպենդիումի վերանայման և այլ աշխատանքներ: Քննարկվել են նաև ՀՄԿ ռազմավարության 2022-2023թթ. կատարողականը, գալիք հաշվետու տարվա ռազմավարական ծրագրերն ու առաջնահերթությունները, ինչպես նաև Քաղաքականության, Ֆինանսական և Աուդիտի կոմիտեների տարեկան զեկույցները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նստաշրջանների ընթացքում ՀՄԿ անդամ պետությունների պատվիրակությունները, այդ թվում՝ ՀՀ պատվիրակությունը, ներկայացրել են իրենց դիրքորոշումը ՀՄԿ Խորհրդի հաստատմանը ներկայացված փաստաթղթերի մասին, ինչպես նաև ՀՄԿ զարգացման ուղղություններին համահունչ՝ յուրաքանչյուր անդամ պետությունում իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն:

Նստաշրջանների ընթացքում հանդես եմ եկել ելույթներով, որոնց ընթացքում ընդգծվել է ՀՄԿ-ի կողմից մշակված գործիքների ու ստանդարտների կարևորությունը՝ մաքսային համակարգի զարգացման հիմնական ուղղությունները նախանշելու առումով՝ այդ համատեքստում ներկայացնելով նաև ՀՀ մաքսային համակարգում ՀՄԿ զարգացման ուղղություններին համահունչ իրականացվող աշխատանքները:

Ներկայացվել են նաև Սահմանների համալիր կառավարման ուղղությամբ ՀՀ մաքսային համակարգի ձեռքբերումները, այդ թվում՝ թույլատվական փաստաթղթերի տրամադրման ամբողջությամբ թվայնացված համակարգ ներդնելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, Խորհրդի աշխատանքներին զուգահեռ կայացել են նաև երկկողմ հանդիպումներ ԱՄՆ մաքսային և սահմանային պաշտպանության գործակալության (CBP) ղեկավարի տեղակալի, Հնդկաստանի կառավարության անուղղակի հարկերի և մաքսերի կենտրոնական խորհրդի նախագահի, ինչպես նաև

Ճապոնիայի ֆինանսների նախարարության Մաքսային և սակագնային բյուրոյի գլխավոր տնօրենի հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՄԿ Խորհուրդը նստաշրջանների ընթացքում հաստատել է Կարողությունների զարգացման կոմիտեի, Բարեվարքության ենթակոմիտեի, Ապրանքների դասակարգման, ծագման և մաքսային արժեքի որոշման կոմիտեների, ինչպես նաև Մշտական տեխնիկական ու Իրավակիրարկման կոմիտեների տարեկան հաշվետվությունները, ՀՄԿ 2023-24թթ. ռազմավարության առաջնահերթությունները, Քաղաքականության հանձնաժողովի, Ֆինանսական ու Աուդիտի կոմիտեների հաշվետվությունները, ինչպես նաև գալիք ֆինանսական տարվա հանդիպումների ժամանակացույցը: Խորհրդի այս նստաշրջանների ընթացքում ընտրվել են նաև Խորհրդի համանախագահող, տարածաշրջանային տեղակալներ, ինչպես նաև նոր գլխավոր քարտուղար, հաստատվել կամ ընտրվել են նաև Ֆինանսական, Աուդիտի կոմիտեի նախագահներ, տեղակալներ, կոմիտեի անդամներ, ինչպես նաև Քաղաքականության կոմիտեի անդամներ:

Հնդկաստանի կառավարության անուղղակի հարկերի և մաքսերի կենտրոնական խորհրդի նախագահի հետ ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագիր, որով հիմքեր են ստեղծվում կողմերի միջև մաքսային բնագավառում փոխգործակցության հնարավորությունների ընդլայնման և ամրապնդման համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նստաշրջաններին մասնակցությունը հնարավորություն է տվել ծանոթանալ համաշխարհային մակարդակում մաքսային գործի ոլորտի գլոբալ զարգացումներին, ՀՄԿ կողմից առաջարկվող նոր գործիքներին ու ստանդարտներին, ինչպես նաև առանձին անդամ պետություններում առևտրի պարզեցմանը, ապօրինի առևտրաշրջանառության կանխմանն ուղղված քայլերին: Ձեռք բերված

տեղեկատվությունը ՀՀ մաքսային ծառայության կողմից կօգտագործվի մաքսային բարեփոխումների շրջանակում, այդ թվում՝ մաքսային քաղաքականության ու վարչարարության առաջիկա 5 տարիների ռազմավարության մշակման նպատակով: Միաժամանակ, ՀՄԿ-ի հետ համագործակցության շրջանակները, այդ թվում՝ ընթացիկ կոմիտեներին, ենթակոմիտեներին, հանձնաժողովների աշխատանքներին ներգրավվածության մակարդակն էապես կընդլայնվի, իսկ նստաշրջանների ընթացքում ձեռք բերված երկկողմ պայմանավորվածությունների արդյունքներով կիրականացվեն շարունակական աշխատանքներ, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերի կնքման ու տեղեկատվության (փորձի) փոխանակման շրջանակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

28.06.2023թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **640-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Բելգիայի Թագավորություն՝ քաղաք Բրյուսել**
5. Գործուղման ժամկետները՝ **21.06.2023-26.06.2023թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Ռուստամ Բաղասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	270,248.00	**270.25**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 159.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	67,016.91	
	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 118.49	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49,942.35	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	183,975.00	**183.98**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 115.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48,471.35	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	193,885.00	**193.89**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**648.11**	**648.11**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 27.06.2023թ.